




ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամը և ՄԱԿ-ի հանրային տեղեկատվության վարչությունը համատեղ հատուկ միջոցառմամբ և վավերագրական ֆիլմերի ցուցադրությամբ նշեցին ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ

«Մենք պետք է միասին գործենք և բարձր մակարդակներում հստակ բարձրաձայնենք, որ ոչ մի իրավիճակում և ոչ մի հանգամանքներում չենք հանդուրժելու կանանց նկատմամբ և ոչ մի տեսակի բռնություն:»

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի-մունի ուղերձը 2009թ.-ի մարտի 8-ի կանանց միջազգային օրվա կապակցությամբ:



Այս տարի ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամը (ՄԱԲՀ) և ՄԱԿ-ի հանրային տեղեկատվության վարչությունը (ՄԱՀՏՎ) համատեղ կազմակերպեցին հատուկ միջոցառում՝ նշելու Հայաստանում կանանց միջազգային օրը, որի բուն թեման էր «Կանայք և տղամարդիկ միավորվել են ընդդեմ կանանց նկատմամբ բռնության»: Միջոցառումը կազմակերպվել էր ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հայտարարած «Միավորվենք ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» քարոզարշավի շրջանակներում: Միջոցառումը կայացավ մարտի 10-ին ՄԱԿ-ի շենքում, որին իրավիճակ էին քաղաքացիական հասարակության, կառավարության, միջազգային համայնքի և ՋՄ-ների մեծաթիվ ներկայացուցիչներ: Միջոցառման ընթացքում ներկայացվեցին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի-մունի և ՄԱԲՀ-ի գործադիր տնօրեն Թորայա Օբայդի Մարտի 8-ին նվիրված ուղերձները, տեղեկություն տրամադրվեց ՄԱԲՀ ԸԳԲ ծրագրի շրջանակում իրականացվող իրավական նոր նախաձեռնության առաջընթացի մասին, ինչպես նաև կատարվեց վավերագրական ֆիլմերի ցուցադրում-քննարկում:

Միջոցառումը վարում էր ՄԱԲՀ ԸԳԲ ծրագրի համակարգող տկն. Ջինա Սարգիզովան: Միջոցառման խոսնակներն էին՝ Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ տկն. Ջենմա Հասրայանը, ՄԱՀՏՎ-ի ներկայացուցչի պաշտոնակատար տկն. Արմինե Հալաջյանը, ՄԱԲՀ-ի ներկայացուցչի օգնական պրն. Գարիկ Հայրապետյանը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Ընտանիքի, կանանց և երեխաների հարցերի վարչության պետ տկն. Լալա Ղազարյանը և ՀՀ դատախազության աշխատակազմի ղեկավար պրն. Աշոտ Եսայանը:



ՄԱԲՀ-ի ներկայացուցչի օգնական պրն. Գարիկ Հայրապետյանն իր ողջույնի խոսքում ներկայացրեց Թորայա Օբայդի ուղերձը, որում վերջինս կոչ էր անում տղամարդկանց և տղաներին ավելի շատ օգտագործել իրենց ազդեցությունը դրական փոփոխությունների համար, ինչպես նաև խորհուրդ էր տալիս բոլոր երկրների իշխանություններին ընդունել և կիրարկել օրենքներ հանցագործներին պատժելու և տուժածներին առողջապահական ծառայություններ ու սոցիալական օժանդակություն տրամադրելու համար: ՄԱՀՏՎ-ի ներկայացուցչի պաշտոնակատար տկն. Արմինե Հալաջյանը ներկայացրեց Բան Կի-մունի ուղերձը, որն ուղղված է կառավարությանը, միջազգային համայնքին և քաղաքացիական հասարակությանը և կոչ է անում միավորել ջանքերը ամբողջ աշխարհում կանանց նկատմամբ բռնությանը վեջ դնելու գործում: Ապա, տկն. Լալա Ղազարյանը խոսեց գենդերային բռնության (ԳԲ), որպես Հայաստանում սոցիալական մտահոգության խնդիրներից մեկի մասին, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ դրանց դերի բարձրացման 2004-2010թթ. ազգային ծրագրի» շրջանակում այդ խնդրին արդյունավետորեն անդրադարձնալու հրատապ կարևորության մասին: Նա նշեց նաև ԳԲ-ի դեմ պայքարելու դաշտում միջազգային համագործակցության միջոցով լավագույն փորձի ներառման կարևորությունը:



Միջոցառման բացման ելույթներից հետո խոսնակները մասնակիցներին ներկայացրեցին գենդերային բռնության տեսանկյունից ՀՀ օրենսդրության գնահատման առաջընթացը, ինչպես նաև CEDAW (Կանանց հանդեպ խտրականության բոլոր ձևերի վերացման կոնվենցիա) հանձնաժողովին Հայաստանի Հանրապետության հաշվետվությունը:

Պրն. Աշոտ Եսայանը մանրամասն ներկայացրեց գենդերային բռնության տեսանկյունից ՀՀ օրենսդրության գնահատումն իրականացնող իրավական փորձագետների խմբի կատարած աշխատանքի առաջընթացը: Նրա ելույթն ավարտվեց հարց ու պատասխանով, որի ընթացքում մասնակիցները բազմաթիվ հարցեր ուղղեցին արտահայտելով իրենց հետաքրքրությունը ՄԱԲՀ ԸԳԲ ծրագրի շրջանակում Հայաստանում իրականացվող աշխատանքների վերաբերյալ:

Տկն. Հասրաթյանը խոսեց CEDAW հանձնաժողովի նիստին քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից կազմված հայկական պատվիրակության մասնակցության մասին, որի ժամանակ CEDAW հանձնաժողովին է ներկայացվել Հայաստանի Հանրապետության 3-րդ և 4-րդ միավորված պարբերական հաշվետվությունը կոնվենցիայի իրականացման փուլի մասին: Նա նշեց, որ CEDAW հանձնաժողովը հաշվի առավ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների նկատառումները: Այս նկատառումները հետագայում ներառվեցին նաև Հայաստանի Հանրապետության կառավարությանը ներկայացրած երաշխավորություններում:



Միջոցառումը ավարտվեց վավերագրական ֆիլմերի ցուցադրությամբ, որոնք ընտրվել էին «Թեժ գծում կանայք են» ֆիլմաշարից, որը պատրաստել է Ղեվ ՏԿ-ն ԶԼՄ մասնագետների ասոցիացիան ՄԱԿ-ի գործակալությունների, այդ թվում ՄԱԲՀ-ի և ՄԱԿ-ի կանանց զարգացման հիմնադրամի, դոնոր երկրների, ՀԿ-ների և նշված վավերագրական փաստերի մասին տեղեկություններ տրամադրած և հետաքննությանն օժանդակած այլ գործընկերների հետ սերտ համագործակցության միջոցով:



Միջոցառման այս հատվածը բավական մեծ տպավորություն թողեց մասնակիցների վրա, քանի որ նրանք շատ հուզված էին կանանց նկատմամբ բռնության փաստերի դիտումից: Մասնակիցների դիտողություններն ու կարծիքները հաստատեցին, որ կանանց նկատմամբ բռնությունն անհանգստացնում է նաև հայ լսարանին, որը ֆիլմերը դիտելուց հետո անմիջապես սկսեց համեմատական անցկացնել ցուցադրված դեպքերի և հայկական իրականության միջև:

Ինչպես մասնակիցներից մեկը նշեց, «Վավերագրական ֆիլմերը շատ ազդեցիկ գործիք են ԳԲ-ի մասին իրազեկության բարձրացման համար: Դրանք ավելի խոր ազդեցություն են թողնում մարդկային գիտակցության վրա, և ուստի ավելի ուժեղ են, քան պարզապես բառերը:» Որպես ամփոփում, մասնակիցները շեշտեցին վավերագրական ֆիլմ պատրաստելու կարևորությունը և հույս հայտնեցին, որ հետևելով այս օրինակին, հետագայում նման ֆիլմեր կնկարահանվեն նաև Հայաստանում տեղի իրավիճակում ԳԲ խնդիրները լուսաբանելու նպատակով: